

ՓՐԱՆՍՈՌԱ ԴԸ. ԿԻՒՐՆԼ

ՆՈՐ ԿՈՒՌՔ

ԹԱՏԵՐԿ ՆՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ



Թարգմանեց Տ. Վ.



Թ Ի Շ Ի Պ

Արագատիպ Ա. Զուլթաթեյադէի, Նիկ. 21.

Скоропечатня А. Бутателадзе. Ник. 21
1904

(Արատապուած լուսմայր երկամանայ Հանդիսէց)

Ն Ո Ր Կ Ո Ւ Ռ Ք

Թատերկ երեք արարուածով

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Ալբերտ Դոննա—բժիշկ.

Մորիս Կորսիէ—նորա
ընկերը.

Դենիս—ծառայ.

Բապտիստ—

Լուիզա Դոննա — բժշկի
կինը.

Ժաննա Լըժէն—Լուիզայի
քոյրը.

Անտուանետտա Միլատ.
Յագենիա—աղախին.

Ե. ԳՈՐԾՈՂ ՈՒԹԻՒՆ

Լուիզա Դոննայի ընդունարանը. փոքրիկ, գեղեցիկ կահա-
ւորութեամբ սենեակ: Խորքում երևում է բուխարիկը, որի ձախ
կողմը մուտքի դուռը, որ վառարանից բաժանւում է ջերմ—
արգելով, (écran) որ և տանտիրուհու սիրած տեղն է կազմում:
Առաջևում ձախ կողմը լուսամուտ, աջ կողմը՝ դուռ, որ տա-
նում է տան ներքին բաժինը:

ՏԵՍԱՐԱՆ I.

ԼՈՒԻՋԱ ԵՒ ԺԱՆՆԱ

Լուիզան նստած է կանխադգեստով (peignoire) և գրում է. Ժանան մտնում է առաւօտեան պարզ հագուստով. Երկուսն ևս մօտ 28 տարեկան կանայք:

ԼՈՒԻՋԱ. (Ղառնալով նորան եւ ծծիչով ծածկելով այն նամակը, որ գրում էր): Ա՛, Ժաննա: Դու արդէն ելե՛ր ես: (Համբուրունելով, Բարի լոյս: Երեկ եկար հաճոյախօսութիւններ լսելու:

ԺԱՆՆԱ. Ի՞նչ հաճոյախօսութիւններ:

ԼՈՒԻՋԱ. Հապա, բո Պօլի երեկուայ ճանճը... որ արտասանուեց Պատգամաւորների ժողովում. Բայց պէտք է ասած, որ շատ լաւ կոկեց նոցա, զանազան «ճշմարտութիւններ» ասելով՝ այդ բոլոր կաշառակերներին: Ամուսինդ անպատճառ իւր ասածը կանէ և այդ պարոններին աւելով դուրս կանեն: Այն ժամանակ... դու կգառնաս Խորհրդի նախագահի կին. իսկ յետոյ՝ ո՛վ գիդէ աշխարհք է...

ԺԱՆՆԱ. (տխրադէմ). Թող ի սէր Աստուծոյ, երեակայութեան ժամանակ չէ...

ԼՈՒԻՋԱ. Աստուած իմ, մի բեղ նայիր, ի՞նչ ողբերգական դէմք ես ստացել: Զինի՛ր բան է պատահել ձեզ:

ԺԱՆՆԱ. Մեզ ոչինչ չէ պատահել. բայց... Դու լրագիրներն արդէն կարդացել ես, ուրեմն, եթէ ամուսնուս պերճախօսութեան մասին տեղեկութիւն ունիս. . է՛հ, բացի դորանից ուրիշ բան բեզ չկարմացրե՛ց:

ԼՈՒԻՋԱ. Ոչ մի լրագրի երես չեմ տեսել. ամուսինս տընից ելնելուց առաջ պատմեց երէկուայ դէպքերի մասին և կատարելապէս հիացած է բո Պօլով:

ԺԱՆՆԱ. Այլալուծ չէ՛ր երեւում նա...

ԼՈՒԻՋԱ. Ամենին: Հանգիստ ու խաղաղ էր, ինչպէս և վրշտ:

ԺԱՆՆԱ. Այժմ հիւանդանոցո՛ւմն է:

ԼՈՒԻՋԱ. Այո՛. առաւօտներն այնտեղ է միշտ:

ԺԱՆՆԱ. Մարդ ուղարկէր այս ըոպէիս նրա յետեից:

ԼՈՒԻՋԱ. Ցնորո՞ւել ես: Ծանր հիւանդի համար է:

ԺԱՆՆԱ. Ոչ, ոչ, հէնց իրեն համար... Հաւատացնում եմ

որ դրական պատճառներ ունեւմ այսպէս յուզուելու համար...
 Զգէտք է ժամանակ կորցնենք:

ԼՈՒԻԶԱ. Եթէ այդպէս է, մարդ կուղարկեմ... Բայց ի՞նչ
 եւմ ասում, որտե՞ղ կարող են գտնել նորան... Ինձ ասաց, որ
 շուտով տուն պիտի վերադառնայ, մէկը պիտի գար նորա մօտ:
 ԺԱՆՆԱ. Զգիտե՛ս ով պիտի գայ:

ԼՈՒԻԶԱ. Ո՛չ: Վախեն՞ում ես...

ԺԱՆՆԱ. Ախ, ո՛չ: Խոստացել են առ այժմ ոչ որի չաւ-
 զարկեն...

ԼՈՒԻԶԱ. Ախ, Աստուած իմ: Ոչինչ չգիտեմ ես. ոչինչ
 չեմ հասկանում. այդպէս էլ չի կարելի մարդու տանջել, բան
 ասա, որ բան հասկանամ:

ԺԱՆՆԱ. Սիրելիս, հանգստացիր, ամեն բան լաւ կլինի:
 Այս աշխարհում ամեն բան լաւ է վերջանում: Բանն այն է,
 որ Ալբերտին դատաստանական քննութիւն է սպառնում...
 Առ այժմ լրագիրները միայն ակնարկներ են անում այդ մասին
 իսկականը չասելով, իսկ վաղն արդէն խայտառակութիւնը կը-
 բացուի, օրուայ չարիք կդառնայ...

ԼՈՒԻԶԱ. Ի՞նչ բանի մէջ են կասկածում: Ի՞նչ կասկած
 կարելի է ունենալ մի մարդու մասին, որ ամբողջապէս կլա-
 նում է հիւանդանոցներով, հիւանդներով, գիտնական շարա-
 գրութիւնով և գիտութեամբ:

ԺԱՆՆԱ. Անիծում զիտութիւն: Հէնց այդ է նորա տու-
 նը քանդողը: Նորան մեղադրում են այն բանի՝ մէջ, որ իւր
 հիւանդների վրայ իւր գիտնական փորձերն է կատարել:

ԼՈՒԻԶԱ. Ի՞նչ, որովհետեւ ինչ որ լրագրի կտոր բամբա-
 սում է, դուք արդէն դատապարտութեան կնիք եք դնում մի
 մարդու ճակատի, որը մեր ժամանակի ամենանշանաւոր գիտնա-
 կանների առաջին շարքո՛ւմն է կանգնած: Օտարազգիների առաջ
 պարծենալու ժամանակ մենք հանդէս ենք հանում Պաստեռ-
 րին և նորանից յետոյ անմիջապէս տալիս ենք Ալբերտ Դոն-
 շայի անունը: Եւ ի՞նչ՞ Մէկը մի յիմարութիւն է մտածել և
 միջակութիւնների ամբողջ արդէն պատրաստ է հրձուելու մեծ
 մարդու խայտառակութեամբ: Ամուսինդ շատ լաւ ծանօթ է
 նորա հայեացքների հետ. ի՞նչ է ասում և մտածում նա: Զի՞
 վարծում, որ կորզուտի, գրամ շորթելու (chantage) խաղ է սա՛:

ԺԱՆՆԱ. Այո, նրա առաջին խօսքն էլ հէնց այդ էր:

ԼՈՒԻԶԱ. Ուրեմն...

ԺԱՆՆԱ. Ոստիկանապետը մեզ մօտ էր: Ամուսնուդ դէմ այնպիսի կասկածներ կան, որ դժուար թէ ձեր բնակարանը չխուզարկեն... այսօր ժամը 4-ին: Մինչ այդ ժամանակ կարելի է վանդաւոր թղթերը թաղցնել:

ԼՈՒԻՋԱ. Կնշանակէ նորա ապացոյցներ չունեն, եթէ ապացոյց են որոնում:

ԺԱՆՆԱ. Եթէ նորա ապացոյցներ չունենային ամենեւին, այն ժամանակ չէին էլ որոնիլ:

ԼՈՒԻՋԱ. Ինչ փորձերի մէջ են մեղադրում նորան:

ԺԱՆՆԱ. Ամուսինդ զանազան հիւանդների խլիրդ (cancer, раке) ե պատուաստել: Ինչպէս երևում է, դեռ ևս ապացուցած է, թէ խլիրդի բշտիկը վարակի՛չ է, թէ ոչ. իսկ քանի որ ապացուցած չէ, չեն կարող օգտուել նորանից, իբրեւ պատուաստի միջոց և բժշկել, ինչպէս Պաստեօրն էր բժշկում կատաղութիւնը:

ԼՈՒԻՋԱ. Խլիրդ... Այո՛, նորա սեղանի վրայ մի մեծ թղթապանակ կայ այդ մեղադրութեամբ...

ԺԱՆՆԱ. Ամուսինս ասում է, որ այս խնդրում կասկածի ոչ մի տեղիք լինել չի կարող: (Հռութիւն):

ԼՈՒԻՋԱ. Յիշում եմ, թէ որքան անբաղդ էի նորա հետ... առաջին ժամանակները... որքան տանջուել եմ նորա պատճառով:

ԺԱՆՆԱ. Այո՛ մտաբերում եմ: Դու խանդատ էիր դէպի նա, խանդատ դէպի նորա գիտութիւնը: Որքան բացաւրում էի բեզ, թէ պէտք է ազատութիւն տալ ամուսնուն իւր պարագմունքների շրջանում, բայց դու ոչինչ լսել անգամ չէիր կամենում: Այն ինչ՝ ես կենդանի օրինակ էի բեզ համար... Որպիսի տոկունութեամբ օգնում էի իմ Պօլին քաղաքականութեամբ տարուելու գործի մէջ. թէև, մեր մէջ ասենք, այդ բանն ամենեւին չէր խանգարում նորան շատ սիրալիք ամուսին լինելու: Դանգատուելու տեղիք չունիմ, բաղտը ժպտում էր ինձ:

ԼՈՒԻՋԱ. Բաղձն ինձ է ժպտում իմ դժբաղդ կազութեամբըս: Այբերտը չկարողացաւ հասկանալ, թէ մինչև ո՞ր աստիճան ամբողջ հոգով նորան էի պատկանում: Վախենում էր ագռռէ իմ փաղաքշանքներիցս, որը խլում էր նորան իւր գիտութեան ձանկից, թէ՛ չէր կամենում ստորանալ, հաւասարուել մի սղէտ կնոջ. Յամենայն դէպս, չնայելով մեր արտաբնական սրտաղեղ յարաբերութեան և համաձայնութեան, մենք օտար էինք միմեանց համար... Նա նոյնքան օտար էր ինձ համար, որ-

քան ահա այն պարոնը, որ անցնում է փողոցով: Ինչ արած, իմ բաղդս էլ է ժպտում: Ինչ համար, այս միջադեպը, յաջողութիւն պիտի համարեմ:

ԺԱՆՆԱ. Իհարկէ, այսպիսի հանգամանքներում, այս բոլորիս շատ վատ կլինէր, եթէ ձեր մէջ էլ այնպիսի սրտազեղ-յարաբերութիւն լինէր, ինչպէս իմ և ամուսնուս մէջ կայ:

ԼՈՒԻՋԱ. Այո՛, սրտով անտարբեր եմ... բայց ներսս, կարծես, մի բան աւերուեցաւ, փշրուեց: Անհունս էի յարգում ամուսնուս, նորա կեանքի խտուրտութիւնն ու մաքրութիւնը, մտաւոր ունակութիւնների լարումը՝ մարդկային տանջանքները, թեթեւացնելու մեծ գաղափարն իրագործելու համար... մարմնական տանջանքները նկատում էր իսկ... (արտաստնելով), հոգեկան տանջանքները նա չէր ըմբռնում: Ցասը տարի նա կողքէ-կողք ապրել է հոգեկան տանջանքների հետ և չէ՛ նկատել: Այո՛, պարծենում եմ, որ տանջուել եմ և դժբաղդ եմ եղել այդպիսի հրէշի հետ:

ԺԱՆՆԱ. Լուի՛գա, ի՞նչ կարիք կայ անարգական խօսքեր ասելու: Նա հրէշ չէ: Նա պարզապէս փառասէր մէկն է: Պօլը միանգամայն այդպէս կոչեց նորան: Կարիք էլ չունենք բանը մեծացնելու, ուղղակի: Այդ անպիտանի ձեռքին դու երբէք ստորացած չես երևացել ուրիշներին:

ԼՈՒԻՋԱ. Նորա գողոցութիւնը ինչ ընկճում էր, բայց միևնոյն ժամանակ այնքան համեստ ու պատրաստակամ էր խեղճ, դժբաղդ մարդու հետ, որ... ինչպէս զայրանայի Իսկ երբեմն ուղղակի սքանչելի էր, հիանալ կարելի էր... Վտանգների վայրկեաններին, համաճարակների ժամանակ—հանգիստ, անխռով, կատարելապէս վստահ իւր վրայ և, պէտք է կարծել, այն ներքին զգացմամբ, թէ ինքն այդ ամբոխի բարերարն է, որին ինքը ծառայում էր և որին պատկանում էի և ես... ինչպէս... ինչպէս այդ ծովի կաթիլներից մինը:

ԺԱՆՆԱ. Յիշում եմ, երբ նա վարակուեցաւ բկացաւով և վտանգաւոր կերպով հիւանդ պառկած էր, դու խնամում էիր նորան... և անկեղծ վշտակցութիւն ու ցաւակցութիւն էիր զգում:

ԼՈՒԻՋԱ. Այո՛, այն ժամանակ ես հոգով-մարմնով նորան խնամելուն էի նուիրուած, յանուն այն դժբաղդների, որոնց ցաւերին թեթեւութիւն էր պարգևում նա. ես կամենում էի բարութեամբ բարութիւն հառուցանել նորան: Բայց, հէնց որ-

առողջացաւ, նորից ինձ իւր տաղանդի ու գիտութեան ուրբերի տակ շարունգ: Այո՛. և նկատե՛ց արդեօք զոնէ իմ անձնուէր հոգատարութիւնս: Ինձնից առաւել ճարտար հիւանդապահ, գիթութեան-քոյր կը գտնե՛ր արդեօք: Այն, ինչ որ իմ հոգու մէջ էր կատարուում, նա չըմբռնեց, չհասկացաւ: Այո՛, իրաւունք ունիս: Ծշմարիտ ես ասում, որ մեծ երջանկութիւն է, որ ես սրտագին կապ չունիմ ամուսնու հետ և քո հաղորդած զարհուրելի լուրդ... ինձ միանգամայն ազատում է նորանից:

ԺԱՆՆԱ. Ի՞նչպէ՛ս...

ԼՈՒԻՋԱ. Այժմենից ինքս ինձ կատարելապէս ազատ եմ համարում... վճռեցի... ամեն ինչ վերջացած է...

ԺԱՆՆԱ. Ի՞նչ արած, արդարացին էլ այդ է: Ամուսնուդ չես սիրում, զաւակներ չունիք... փակուի՞ր սենեակիդ չորս պատերի մէջ... և...

ԼՈՒԻՋԱ. Եւ կենդանի թաղուեմ, հա՛. Տարօրինակ ազատութիւն կլինէր... Որովհետեւ Ալբերան արժանի է բանտի, ուրեմն ե՛ս էլ եմ արժանի... Ո՛չ, սիրելիս, ես կամենում եմ՝ ճաշակել բաղդաւորութիւնը, իմ ազատութիւնս այն կլինի, որ ես կլսեմ սրտիս բաբախի ձայնին և կը հետեւեմ նորան...

ԺԱՆՆԱ... Օ՛ր, բանը սրտին է վերաբերում: Ուրեմն դու սիրում ես արդէն մէկին: Այն ժամանակ ես և Պօլն էլ ինչո՞ւ ենք աշխատում ձեր ապահովութեան մասին, եթէ դու քո ապահարզանովդ...

ԼՈՒԻՋԱ. Քեզ ո՛վ է բան ասում ապահարզանի մասին:

ԺԱՆՆԱ. Տէր Աստուած. չէ՞ որ ինքդ ես ակնարկում քո սրտի ձայնի, ազատութեան կանկութեան մասին... Ձեմ հասկանում ի՞նչ ես ուզում, ի՞նչ բանի ես ձգտում...

ԼՈՒԻՋԱ. Ախ՛, մի՛թէ կարող եմ, ընդունակ եմ այս բոլորէիս այդ բոլորը կշռադատել... միանգամից: Մի ժամ առաջ ինքս ինձ յաւետեանս կապուած էի զգում...

ԺԱՆՆԱ. Հանգստացիր, ամեն բան կարգի կընկնի: Ոչինչ մի խորտակիր, այդ յուզումն ու վարանմունքը կանցնի և Ալբերան այլ ևս այնքան դատապարտելի չի թուալ: Նա կփոխուի (Համբուրնիով նորան). Լուեզա, վստահ եղի՛ր վրաս, ասա ինձ: Ո՛վ է նա:

ԼՈՒԻՋԱ. Մօրիս Կօրմիէն:

ԺԱՆՆԱ. Ի՞նչ, գարձեալ գիտնական, կրկին գիտութեան

մարդ... գիտութեան: Մի՞թէ բաւական չէ բեղ համար գիտութիւնը...

ԼՈՒԻՉԱ. Նա ուսումնասիրում է հոգեբանութիւնը, ուսումնասիրում է մարդկային հոգին: Երիտասարդ գիտնականների շրջանում նա յայտնի է արդէն իւր երկերով: Այն ամենն, ինչ որ կատարւում է մեր մէջ, ինչ որ յուզում, ուրախացում է մեզ, պոք բոլորը ուսումնասիրել է նա: Գոնէ, կարելի է ասել, որ կին արարածը տարիներով աննկատելի ու անհասկանալի չի մնայ նորա հետ:

ԺԱՆՆԱ. Այո՛, բո վշտերին ու տանջանքներին նա յունարէն կամ յատիններէն մի անուն կտայ. սակայն, պէտք է խոստովանել, որ նա վայելչակալմ, զուգուած, կոկլիկ, ի՛սկ տղամարդ է: Ընդհանուր առմամբ վատ չէ, բայց ես ամուսնուդ աւելի գերակշռութիւն կտայի, քան նորան:

ԼՈՒԻՉԱ. Է՛, դու սիրահարուած ես քո Պօլի վրայ. դու յաւ դատաւոր լինել չես կարող:

ԺԱՆՆԱ. Այսօր թէև բարկացած եմ Ալբերտի վրայ, բայց ես նորան կգերադասէի... Նա աւելի նշանաւոր է... և, պէտք է խոստովանել, աւելի խելօք, քան Կօրմիէն: Դու, կարծեմ, նորա հետ պստեղ ես ծանօթացել, նա ամուսնուդ մօտ էր գալիս, իւր գրուածներն ուղղել տալու համար:

ԼՈՒԻՉԱ. (Ժպտալով). Ամենեին էլ ուղղել տալու համար չէր գալիս... Էջղայնութեան մասին՝ իւր գրուած երկի մէջ մի քանի բժշկական տեղեկութիւններ էր պակաս... և ամուսինս մասնակցում, օգնում էր նրա գրուածքին:

ԺԱՆՆԱ. Է՛, յաւ, ասա խնդրեմ, Կօրմիէն իւր բոլոր հոգեբանութեամբ կուհե՞ց (s'aviser, догадаться) այն տպաւորութեան մասին, որ թողեց բեղ վրայ:

ԼՈՒԻՉԱ. Օ՛ր, ո՛չ ես շատ զգոյշ էի պահում ինձ: Ամբողջ ժամանակը փախաբուշ յարգանքով ու բարեկամական մեծարանքով էր վերաբերում ինձ: Եւ միայն երեկ էր, որ անյարմար դրութեան մէջ գրին ինձ:

ԺԱՆՆԱ. Կնշանակէ միայն երէկ արտայայտեց... խորամանկն է: Իւր շրջանում երեկ արդէն յայտնի էր, թէ ինչ պիտի պատահէր բեղ...

ԼՈՒԻՉԱ. Պատահականութեան արդիւնք էր:

ԺԱՆՆԱ. Եւ դու անյոգո՞ղգ էիր:

ԼՈՒԻՉԱ. Ապագուցանել կարող եմ: Ահա այն նամակը,

որ գրել եմ քո գալուց առաջ... Պատուիրում եմ, որ այսուհետեւ չհամարձակուի ինձ մօտ գալ: (Լուիզան հանում է ծծատետրից (buvard) նամակը: Մինչ դեռ ժաննան կարդում է): Որք է տեղիք կոյ գրածիս մէջ, որ սպասէի, թէ իմ հրամանս չի կատարուի:

ԺԱՆՆԱ. (Յետ դարձնելով նամակը): Խիստ կտրուկ է: Նայն իսկ տողամէջ կարդալ ու բան հասկանալ չի կարելի... Լաւ է:

ԼՈՒԻԶԱ. Այո՛, բայց... դժբաղդաբար՝ շատ լաւ է: (Նամակը պատռտելով): Ահա թէ ինչ կանեմ այս նամակը:

ՏԵՍԱՐԱՆ II.

ԼՈՒԻԶԱ, ԺԱՆՆԱ ԵՒ ԲԱՊՏԻՍՏ.

ԾԱՌԱՆ. Մի քահէլ աղջիկ՝ պարոնին է հարցնում: Ասում է, որ իրեն ճանաչում է: Ասում է, հիւանդանոցումն է եղել պառկած: Եւ պարոնն, ասում է, սպասում է այսօր իրեն:

ԼՈՒԻԶԱ. Ասա, յետոյ թող գայ:

ԾԱՌ. Նամակ ունի, ասում է:

ԺԱՆՆԱ. Բիչ առաջ ասացիր, որ շուտով տուն պիտի գայ բժիշկը:

ԼՈՒԻԶԱ. Ճշմարիտ որ... Թող քիչ սպասէ: (Բապտիստը դուրս է գնում):

ԺԱՆՆԱ. Իւր ապագայ հիւանդներից մէկը: Ինչո՞ւ է այստեղ կանչել:

ԼՈՒԻԶԱ. Յիրաւի, որ տարօրինակ է: Գուցէ սա էլ այն... զոհերից է, որոնց պատուաստում էր... Պէտք է տեսնեմ նորան: (Ջանգ է տալիս. ծառան մտնում է): Աղջկանն ասա, թող ներս գայ:

ՏԵՍԱՐԱՆ III.

ԼՈՒԻԶԱ, ԺԱՆՆԱ, ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ.

Վատառողջ, նիհար մի մատաղահաս աղջիկ, որին կարելի էր գեղեցիկ համարել, եթէ հիւանդոտ տեղը չունենար: Սպիտակ զլխակապ և կապոյտ կրկնոց (pèlerine)—որբանոցի

զգեստով: Սկզբում շատ ամաչկոտ և քաշուող, յետոյ բացւում և ազատ խօսում է),

ԼՈՒԻԶԱ. Կկամենայիք ամուսնո՞ւս տեսնել: Ձգիտեմ, կը-յաջողուի՞ արդեօք:

ԱՆՏՈՒԱՆԵՑՑԱ. Ինչ գրել է, որ ժամը 10-ի մօտերը...

ԼՈՒԻԶԱ. Նա բաւական մոռացկոտ է: Ուրախութեամբ կհաղորդեմ նորան այն ամենն, ինչ որ ունիք ստելու:

ԱՆՏՈՒԱՆԵՑՑԱ. Հնորհակալ եմ, սակայն...

ԼՈՒԻԶԱ. Ա՛, խնդիրն ուրեմն բժշկական խորհրդակցու-թեան է վերաբերում:

ԱՆՏՈՒԱՆԵՑՑԱ. Այո, Տիկին:

ԼՈՒԻԶԱ. Ամուսինս բժշկո՞ւմ էր ձեզ:

ԱՆՏՈՒԱՆԵՑՑԱ. Այո տիկին... Թոքախտից:

ԼՈՒԻԶԱ. Եւ այժմ... աւելի լաւ էք զգում ձեզ:

ԱՆՏՈՒԱՆԵՑՑԱ. Հատ առաւել լաւ: Մեր բժիշկը չէր հաւա-տում իւր աչքերին: Եթէ մինչև տարուայ վերջն առողջանամ բոլորովին, ինչ կընդունեն մեր վանքի գթութեան-քոյրերի շարքում:

ԼՈՒԻԶԱ. Դուք կամենո՞ւմ էք գթութեան-քոյր դառնալ:

ԱՆՏՈՒԱՆԵՑՑԱ. Այո՛, տիկին եթէ ոյժերս ու առողջութիւնս բոլորովին վերադառնան. պէտք է ոյժ ու զօրութիւն ունենալ, որպէս զի մարդ հիւանդներին խնամել կարողանայ:

ԼՈՒԻԶԱ. Եւ ուրեմն յատկապէս վանքից եկել էք ամուս-նո՞ւս տեսնելու: Դուք նորան շատ մեծ հաւատ էք ընծայում:

ԱՆՏՈՒԱՆԵՑՑԱ. Ախ՛, Յէր իմ Աստուած. ինչպէս հապա-հաւատ չընծայեմ: Մի հարցնէիք դուք, թէ ի՞նչ գրութեան մէջ էի հիւանդանոցում... Ոչ որ չէր հաւատում, որ կարող կլի-նիմ փրկուել. պարոն Դոննան էլ, միւսներն էլ, նմանապէս: Մի-անգամ, երբ կարծում էր, որ ուշաթափ եմ, իւր օգնականին ասաց, որ երեք օր էլ չեմ ապրիլ:

ԼՈՒԻԶԱ. Բայց և այնպէս փրկեց բեզ:

ԱՆՏՈՒԱՆԵՑՑԱ. Նա պնդիսի գիտական, այնքան բարի և համբերատար է: Գթութեան-քոյրերի մէջ անգամնորա չափ բա-րի անձնաւորութեան բիչ կըպատահի:

ՏԵՍԱՐԱՆ IV.

ԼՈՒԻՋԱ, ԺԱՆՆԱ, ԱՆՏՈՒԱՆՆՏՏԱ ԵՒ ԱԼԲԵՐՏ.

ԱՆՏՈՒԱՆՆՏՏԱ. (Տեսնելով Ալբերտին բացականչում է): Պարոն Բոֆիլդ. (Ձեռք է մեկնում նորան, որը իւր երկու ձեռքերի մէջ է առնում նորա մեկնած ձեռքը):

ԱԼԲԵՐՏ. Անտուանետա... Ճշտապահ... ապրես: (Ծանելով կնոջը): Ձեզ այստեղ հրաւիրեցին:

ԼՈՒԻՋԱ. (Շփոթուած). Այո, ես...

ԱԼԲԵՐՏ. (Սառնութեամբ): Լաւ, յաւ. (քարեւելով Ժաննային): Բարեւ, Ժաննա:

ԺԱՆՆԱ. Երկու խօսք...

ԱԼԲԵՐՏ. Խնդրեմ. Շնայելով կնոջը. վերջինս Անտուանետայի հետ ղիմում է դէպի բեմի խորքը): Խնչ կայ:

ԺԱՆՆԱ. Դուք գիտէք, թէ ինչ կայ:

ԱԼԲԵՐՏ. Ա՛, իմ նշանաւոր ոճիրս: Դուք կամենում էք իմանալ՝ ճիշդ է: Ճիշդ է. Ա՛յտեսնում էք (ցոյց տալով Անտուանետային եւ կնոջը) կարելի էր և առանց լրտեսութեան...

ԺԱՆՆԱ. Ձեզ համար անհասկանալի է, որ ձեր մասին անհանգստացողներ կան: Խնչ, ձեր կարծիքով, պէտք էր թողնել, որ աղջիկը պատասխանէր ձեր ծառաների հարց ու փորձին:

ԱԼԲԵՐՏ. (Ժպտալով). Իսկ ձեր հարց ու փորձին ինչ պատասխանեց:

ԺԱՆՆԱ. Որ նա ձեզ պաշտում է: Ես կարիք չունէի ոչ որի հարց ու փորձի ենթարկելու, ես գիտեմ... ոստիկանապետից, որ մեզ մօտ էր և այնպիսի տեղեկութիւններ էր բերել, որ միաս չէր ունենայ, եթէ դուք էլ իմանաք:

ԱԼԲԵՐՏ. Ես արդէն միջոցներ եմ ձեռք առել: Պատահեցի ձեր ամուսնուն... Բայց առանց այդ էլ նախատեսնում էի այդ բոլորը և երէկ արդէն խնդրել եմ բարեկամներիցս մէկին, որ գայ և տանէ թագգնէ այն թղթերը, որ այստեղ պահելը քաւական վտանգաւոր է. նա կգայ տանելու 12-ից յետոյ: Ե. կողք Մօրիս Կօրմիէն է. դուք ճանաչում էք նորան. մի երիտասարդ, որին աշխատակցում էի հիպոտիզմի մասին գրուած մի յօդուածի մէջ:

ԺԱՆՆԱ. Ճանաչում եմ նորան: Նա մի մեծ առաւելու-

Թիւն ունի, — գիտէ լուել: Մէկը, որ երէկ երեկոյեան խօսում էր ձեր մասին նորա հետ... էլ չկասկածեցի, անգամ թէ նա առաւօտեան տեսնուել է ձեզ հետ:

ԱԼԲԵՐՏ. Ո՞վ էր խօսողը:

ԺԱՆՆԱ. Մի առանձին նշանակութիւն չունի այդ: Ուրեմն ամեն բան յաւ կերթայ:

ԱԼԲԵՐՏ. Օ՛, այո՛. յոյս ունիմ:

ԺԱՆՆԱ. Եւ դուք հանգիստ էք:

ԱԼԲԵՐՏ. Բոլորովին:

ԺԱՆՆԱ. Իսկ ձեր խիղճը...

ԱԼԲԵՐՏ. Խիղճս և ես — մի ամբողջութիւն ենք կազմում:

ԺԱՆՆԱ. Ուրեմն աւելի վատ:

ԱԼԲԵՐՏ. Սիրելի՛ս, (ցոյց տալով Անտուանետային) նայիր այս անմեղ երեխային. նա թոքախտով վարակուած է մինչև ոսկրների ծուծը և մինչև աշուն էլ չի քաշիլ... Ենթադրեցէք, որ նորան մի զարհուրելի հիւանդութիւն եմ պատուաստել, մի հիւանդութիւն, որ յամենայն դէպս մահացու է և երեակայեցէք, որ այդպիսով հնարաւորութիւն եմ ստանում գտնել այնպիսի մի միջոց, որով կարող պիտի լինեմ ազատել այդ հիւանդութիւնից առողջ, կենսունակ մայրերի... Ենթադրեցէք... Սակայն մի էլ ենթադրէք... ինչ որ պէտք էր անել՝ արուած է: Եւ, առանց ճշմարտութիւնը թաղցնելու, ասացէք, մի՞թէ ես յանցագործ եմ հէնց այն պատճառով, որ քննում եմ այդ խղճուկ, լղրճուկ մարմինը, որ դատապարտուած է մօտալուտ մահուան տագնապի, և այդպիսով պիտի գտնեմ այն զաղտնիքը, որ ամբողջ սերունդներ պիտի փրկէ...

ԺԱՆՆԱ. Այդ խղճուկ մարմինը դեռ ևս կեանք ունի. նա կարող է դիմադրել, առողջանալ:

ԱԼԲԵՐՏ. Ի՞նչ էք խօսում: Կարծէք ես բանից տեղեկութիւն չունե՛մ: Նա անյոյս կորածներից է:

ԺԱՆՆԱ. Բայց կարող է պատահել, վերջապէս, որ սխալուէք: Դուք Աստուած չէք: Ի՛, ենթադրեցէք մի բոպէ, որ թոքախտից փրկուի և մնայ այդ մահացու հիւանդութեամբ, այն ժամանակ ի՞նչ կանէք:

ԱԼԲԵՐՏ. Այն ժամանակ մի բան է մնում միայն — ատրո՜ճանակը ճակատիս դնել:

ԺԱՆՆԱ. Ա՛խ, Ալբերտ, մի՛թէ այդպիսի բան կարելի է ասել:

ԱԼԲԵՐՏ. Եւ կասեն և կկատարեն: Սպանել՝ պղպիսի հիանալի, սքանելի արարան... Նա ինքը մարմնացած բարութիւն է, որ պատրաստ է զոհել իրեն մեթաֆորի համար, առանց որեւէ ազեղ շարժաթիթների: Նա պաշտում է ինձ. ինձ՝ Նախախնամութեան առաքելալ է համարում, որն ամբողջ է մարդկութեան տանջանքները: Եւ այդ հիացումն ու սքանչացումը— իմ միակ պարգևս է: Մի՛թէ դուք ենթադրել կարող էք, մի բոլոր անգամ, որ ես թեթեմութեամբ կարող էի մահուան դատապարտել նորան: Ո՛չ. և, դժբաղդարար, կարող եմ վաղորօք ասել նորա մահուան օրը, գուցէ և ժամը:

ԺԱՆՆԱ. Ձարմանալի կուրօրէն հաւատ էք ընծայում ձեր գիտութեանը:

ԱԼԲԵՐՏ. Ես հաւատ եմ ընծայում ականջիս, որ ըմբռնում է կերուած-մաշուած թոքերի ծանր շնչառութիւնը, ես հաւատում եմ աչքիս, որ որոշում է խոշորացոյցի տակ եղած մանրէները, ես հաւատում եմ բազկերակի անկանոնութիւնը որոշող զգայնութեանս, ես հաւատում եմ...

ԺԱՆՆԱ. Դուք չափազանց հաւատում էք... Ձեր հաւատը բաւական կլինէր գիւղական մի ստուար ամբօխի համար: Ես չէի կարծում, որ դուք այդքան դիւրահաւատ էք, իմ բարեկամ: Սակայն, մեկնելուցս առաջ, թող տուէք մի փոքրիկ խուրհուրդ տալ ձեզ: Ձեր ամուսինը գրգռուած է ձեր դէմ, բայց վերջնականապէս յարաբերութիւնը խզելու մաւին չէ մտածում. գուցէ Լուիզան առանց մտածելու մի բան կասէ, ուշադրութիւն չը դարձնէք... Նորա մասին երաշխաւորում եմ... ընտանիքի մէջ պէտք է համերաշխ լինենք:

ԱԼԲԵՐՏ. Դուք պատուական կին էք, Ժաննա. (սղմում է նրա ձեռքը):

ԺԱՆՆԱ. Տ'տեսութիւն: (Մօտենում է Լուիզային եւ երկուսն եւս կամենում են դուրս գնալ):

ԱԼԲԵՐՏ. Լուիզա, սպասիր խնդրեմ:

ԺԱՆՆԱ. Տ' տեսութիւն:

ՏԵՍԱՐԱՆ V.

ԼՈՒԻԶԱ, ԱԼԲԵՐՏ ԵՒ ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ.

ԱԼԲԵՐՏ. (Առանձնակի կնոջը): Դու կամենում էիր ի-

մանալ այս աղջկանից... Այժմ կենդանի չենք ինչիս խորհրդակցութեան ժամանակ. (Լուիզան քաղաքական շարժում է անում): Ո՛չ, ո՛չ, ես պարզեմ եմ կամենում: Ոչ որի դատաստանից չեմ վախենում: Միայն թէ գիտենային... (Անտուանետտային): Ձեզ չի՞ խանգարում ամուսնուս ներկայութիւնը: Անտուանետտան սիրալիր հայեացք է ծագում: Լուիզան նստում է քաղկաթոռի վրայ: Ալքերտը քնքշութեամբ եւ հովանաւորողի ձեւով ընկնում է Անտուանետտայի ուսերից եւ նրա երեսը լոյսին է դարձնում): Օ՛, բաւական լըցուել ենք: Աբբեյն այլ ևս այնքան չեն փայլում: Ի՛նչպէս է բունդ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. (Ուրախ) Ի՛նչպէս արջամկանը (marmotte, cyrène):

ԱԼԲԵՐՏ. Ախորժակդ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Լաւ. առհասարակ ամեն ինչ լաւ է:

ԱԼԲԵՐՏ. Այո... շնչառութիւնը կկամենայի լսել. անցէք մահճարգելի յետեւ և հանեցէք ձեր սեղմիրանը, (coorsage): (Անտուանետտան մահճարգելի յետեւից, իսկ Ալքերտը սենեակից): Եթէ ամեն ինչ այսպէս լաւ է, էլ ինչո՞ւ էիք գրում ինձ ձեր անհանգստութեան մասին: Ի՛նչն է անհանգստացնում ձեզ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. (Անվստահաբար): Գիտեք ի՛նչ, բշտիկի պէս մի բան է, բայց չի մեծանում. (Լուիզան յուզմամբ լսում է): Օ՛, ասենք հապիւ-հազ երևում է... Եւ ռաշադրութիւն անգամ չէի դարձնիլ, բայց ծծիչ-սրուակ (ventouse, ԾԱՔԱ) դնող բոլոր նկատեց... Ես մտածեցի, թէ, քանի որ դուք կամենում էիք ամեն բանի մասին տեղեկութիւն ստանալ, ամենայն մանրամասնութեամբ... Եւ այնքան ուրախացայ, որ դուք իսկոյն և եթ պատասխանեցիք ինձ...:

ԱԼԲԵՐՏ. (Գնալով նրա մօտ). Լաւ, լաւ: Որտե՞ղ է այդ բշտիկը. (Երեսում է բժշկի գլուխը, որ թեքում է դիտելու համար): Ձի՞ ցաւում, երբ սեղմում եմ. Լաւ: (Մի քանի քայլ յետ ու առաջ է գնում սենեակի մէջ առանց նայելու կնոջը). Գիտեմ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Վտանգաւոր բան չէ՞:

ԱԼԲԵՐՏ. Ոչ... Այնտեղ ձեր բժշկին ցոյց տո՛ւիք:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Այո. ասում էր, որ դատարկ բան է:

ԱԼԲԵՐՏ. Նորա անունը Վերդիէ չէ՞:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Այո՛, Վերդիէ:

ԱԼԲԵՐՏ. Ճանաչում եմ. իմ նախկին ընկերակիցս է:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Այո՛, ինչպէս չէ: Եւ որքան սիրում

է Ձեզ:

ԱԼԲԵՐՏ. (Հեզնօրէն). Չափազանց ուրախ եմ: Ե՛, այժմ տեսներ թոքերը: (Ականջ է դնում): Շնչեցէ՛ք. ուժո՛վ. աւելի, աւելի՛ ուժով. ուժո՛վ եմ ասում ձեզ... Հազացէ՛ք. հազացէք... (Վրդովուած շարունակում է): Ոչինչ չկայ: (Ուղղում է, սենեակն աչքի է անցնում եւ դիտում է աղջկանը): Ի՛նչ էք այդպէս նայում ինձ:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Որեւէ բանով դժգո՛հ էք ինձնից: Մի՛ թէ նորից վատացել է:

ԱԼԲԵՐՏ. (Գոպտութեամբ): Դուք ատոզացել էք... բոլորովին:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ճշմարիտ է... Ճշմարիտ է ինձ այժմ բոլորովին ուրիշ տեսակ եմ զգում, կարծէք ուրիշ մարդ լինեմ... Եւ բոլոր բժիշկները, քոյրերը, ամենքն ասում են...

ԱԼԲԵՐՏ. Ի՛նչ էք արել:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Այսինքն, ի՛նչպէս թէ ի՛նչ եմ արել:

ԱԼԲԵՐՏ. (Անհամբերութեամբ): Ի՛նչ էիք ուտում, ինչ-պիսի՛ կեանք էիք անցնում:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ինչպէս պատուիրել էիք: Ամեն ինչ ճշտութեամբ կատարել եմ, ինչ որ սահմանել էիք. միայն մի բան...

ԱԼԲԵՐՏ. Ի՛նչ, դէ՛հ ասացէք վերջապէս:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Մի բարկանաք վրաս, խնդրեմ. Ամեն առաւօտ քիչ շատ քիչ Լուրդի սուրբ ջուր էի խմում:

ԱԼԲԵՐՏ. (Շուտ գալով մի քանի քայլ է անում սենեակում, ապա նորից դառնում է դէպի նորան մնայլ եւ համարեա սպառնալից): Հազնուեցէք:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Ի՛նչ... բարկացա՛ք, ներեցէք, խնդրեմ: Ես չէի կամենում ասել... Բայց ինձ թւում էր, որ Աստուած կը պատժէր ինձ, եթէ չիտատովանէի: Դուք կարծում էք, որ չե՛մ հասկանում, թէ մինչ որ աստիճան շնորհապարտ եմ ձեզ:

ԱԼԲԵՐՏ. Թողէք, ի սէր Աստուծոյ, ես այդ մասին չեմ մըտածում:

ԼՈՒԻՉԱ. (Մօտենալով Անտուանետային): Ասեցէք սիւրբի աղջիկս, վերադարձէք վանք և յայտնեցէք մայրապետին,

որ ինքս անձամբ կգամ և կինդրեմ, որ ձեզ թողնեն մի բանի ժամանակ մեզ մօտ ապրելու համար: Ամուսինս ամենևին չի բարկանայ: Նա սիրում է ձեզ, կկամենար անձամբ հետևել հիւանդութեան ընթացքին: Դուք պատեղ հանգիստ կլինէք. ձեր կրօնական զգացումներին կվերաբերուենք ամենայն յարգանքով, Հաւատացէք Նախախնամութեան, աղօթեցէք և յուսացէք:

ԱՆՏՈՒԱՆԵՏՏԱ. Մի՛թէ վտանգաւոր դրութեան մէջ եմ:
ԼՈՒԻՒՋԱ. Ո՛չ. անհանգիստ մի լինիք: Ապրեցէք մեզ մօտ և մենք լաւ բարեկամներ կդառնանք: (Համբուրում է նորա ճակատը, գնում է դէպի դուռը եւ արագ վերադառնում է դէպի ամուսինը):

ՏԵՍԱՐԱՆ VI

ԼՈՒԻՋԱ ԵՒ ԱԼԲԵՐՏ

ԼՈՒԻՋԱ. Մարդասպան:

ԱԼԲԵՐՏ (Մեղմորէն). Այո՛, մարդասպան...

ԼՈՒԻՋԱ. Ի՞նչ աւելի ստոր, զարշեի բան կարող է լինել, բան պս ոճրագործութիւնը: Խեղճ, անօգնական անպաշտպան մի որբ և...

ԱԼԲԵՐՏ. Նա մեռնում էր: Ես ամեն հնար գործ դրի նորան փրկելու համար: Ի՞նչ դրութեան մէջ էր նա: Եթէ որեւէ բժիշկ ասէր նորան, թէ աղատելու հնար կայ, մէնք պղպիսինին խելագար կանուանէինք: Ի՞նչ վնաս կարող էի տալ նորան: Նա նոյն իսկ խայթոցն անգամ չզղաց, — ես պատուաստեցի նորան ուշաթափ եղած ժամանակ, և միայն վեց ամսեց յետոյ հիւանդութիւնը պիտի երևար, իսկ վեց ամիսը նորա համար... ամբողջ յաւիտենականութիւն է:

ԼՈՒԻՋԱ. (Հեգնօրէն). Եւ յանկարծ չի կամենում մեռնել:

ԱԼԲԵՐՏ. Ա՛խ, այո՛, տեսնում եմ, որ մեղաւոր եմ: Կեանքիս մէջ առաջին անգամն եմ տեսնում... Երեւակայել նա կարող պիտի ըլլար նախազգուշութիւնները, որ բանեցնում էի փորձերի ժամանակ, որ մի բոլոր անգամ չկարձէի հիւանդի կեանքը. հիւանդութեան մահաոխիժ բնական ընթացքն աւելի կանուխ էր հասնում, բան փորձերիս հետեանքը: Եւ որքա՞ն դիտողութիւններ է կորել իղուր...

ԼՈՒԻՋԱ. Մի խօսքով, դու մի ձեռքով հիւանդին էիր բռնկում, ներքուստ՝ վախենալով բարեյաջող ելքից, այն ինչ միւս ձեռքով մահացու վէրք էիր տալիս նորան:

ԱԼԲԵՐՏ. Ես անյողդողդ հաւատում էի... գուցէ ծիծառ զեղի կ'թուայ, որ հիւանդութեան որոշումն անսխալ է:

ԼՈՒԻՋԱ. Բայց դու այնչափ խելք ունիս, որ պէտք է զգայիր և վտանգաւոր հեռեանքը: Կարող էր հրաշք պատահել և դորա ապացոյցն աչքերիս առաջն է.—այդ հրաշքը պատահեց: Յիշիր զգայնութիւնը, ներշնչումը, մարդկային նեարդերի բոլոր խորհրդաւորութիւնը, որոնք մարդուն հիւանդութեան անկողնից ոտքի են կանգնեցրել, քեզ պէս հաւատաստներին առաւել զարմացնելու համար: Պէտք էր մտածել եւ հրաշքն երի մասին:

ԱԼԲԵՐՏ. Երբէք առիթ չեմ ունեցել դիտելու նոցա:

ԼՈՒԻՋԱ. Եթէ դիտէիր էլ, դարձեալ նոյնը կ'լինէր: Ամեն բան ապացոյցը ձեռքին բացատրելու անյագ ծարաւդ ոչ մի բանի առաջ չէր կանգնիլ: Մի՛ ստիք. յիշո՛ւմ ես, մօտ օրերս, ճաշի ժամանակ, ի՞նչ պատասխանեցիր այն զգայուն տիկնոջը, որ նողկանք էր զգում կենդանահրձական փորձերից: Ի՞նչ պէս կարմրեցիր և սկսեցիր ապացուցանել, թէ «ինչ նշանակութիւն կարող է ունենալ շան վնկստոցը, երբ ամբողջ մարդկութիւնն է տառապում»: Որպէս զի օգնէիր նորան, շան վրնկստոցը քո աչքում շատ չնչին զոհաբերութիւն էր թւում:

ԱԼԲԵՐՏ. Ես ասում էի, որ եթէ զօրապետներն իրաւունք ունին ամբողջ գնդեր ջնջել հայրենիքի փառքի համար, ապա նախապաշարում է դիտնականից երկու-երեք կեանք զոհաբերելու իրաւունքը խել՝ յանուն մի մեծ գիւտի, ինչպէս է կատարութեան կամ բկացաւի շիջուկի գիւտը: Դժբաղդ զինուորը, որ գնդակահար է եղած և զարհուրելի տանջանքներից հեծում է որևէ մի փոսի մէջ, մինչև որ նորան չեն վերջացնիլ, նորա կօշիկները հանել-տանելու համար, այդ դժբաղդը մեռնում է, ի հարկէ, ոչ առաւել նուազ փառաւոր և վեհ գաղափարի համար, քան այն անզգայացրած հիւանդը, որի վերջին ճղնաժամերն անցնում են բժիշկների դիտողութեան առաջ՝ նոյնչափ վեհ գաղափարի համար,—ազատել միլիոնաւոր համանման դժբաղդների կեանքը: Այո՛, այդպէս են իմ սկզբունքներս: Եւ, չնայելով, իմ բոլոր վիշտ ու կսկիծիս, ես այժմ էլ չեմ հրաժարուիլ նոցանից:

ԼՈՒԻՋԱ. Քո վիշտն ու կսկիծ՝ը, Այ, դու պերճախօս հռետոր Պէտք է ուրախանալ, ի հարկէ, որ քո փորձն իզուր չէ կորել, որ քո սրկում—պատուաստումը ներգործում է. դիտիր... Խնչ մի մեծ բան է, որ դու խել ես մի մատաղահաս աղջկանից նորա կեանքի մի քանի երջանիկ տարիները և դորա փոխարէն մի քանի տանջանքի տարի ես շնորհել... Հապա, դու քա փոխարէն, ինչպիսի՞ գանձ ես մտցրել գիտութեան շտեմարանը: Իսկ կկամենաս ճշմարիտն իմանա՞լ: Քո բոլոր մեծագոյ, մեծահասակն բառերդ գիտութեան և մարդկութեան մասին, միայն մի նպատակ ունին, յագուրդ տալ քո փառասիրութեանդ: Եւ այդ աղջիկն սպանւում է յանուն քո փառասիրութեան, որպէս զի մի երեսուն տարուց յետոյ բեղարձան կանգնեցնէին, իսկ անունդ մարմարիտնէ տախտակի վերայ դրոշմէին... Ահա թէ ո՞րն է ճշմարտութիւնը:

ԱԼԲԵՐՏ. (Ուժեղ շեշտելով). Ո՛հ:

ԼՈՒԻՋԱ. Նոյն իսկ քո վիշտ ու կսկիծդ, եթէ միայն անկեղծ է դա, նոյնն է ապացուցանում: Չեր գիտութիւնը, ձեր նոր կուրքը, որին դուք երկրպագում էք և որի աւտունով ոտնակոխ էք անում ամենքին և ամեն ինչ, որչափ էլ զոհեր չբերէք նորան... Նա երես է շուռ տալիս ձեզնից: Դու կարող էիր նորան զոհաբերել միմիայն սեփական կեանքդ:

ԱԼԲԵՐՏ. Բայց մի՞թէ ես երբեքից փախել եմ վտանգից: Երբեքից դժբաղդին և հիւանդին բացասե՛լ եմ: Ես կեղտի մէջ կորած աղքատ մի կնոջից վարակուեցի բկացաւով: Նորան կեանք պարգեւելու համար իմ կեանքն էի զոհաբերում: Մի՞թէ այն ժամանակ ես փառքի և պատիւների համար էի մտածում, որ քոնցից պատրաստ էի յաւիտեանս հրաժարուելու... Ես կեանքս վտանգի էի ենթարկում նոցա համար... այն պատճառով, որ առաւել քաղցր ու վեհ բան չկայ աշխարհումս, քան այն՝ երբ մեռնում ենք յանուն գաղափարի, սկզբունքի: Երբ ես ժանտախտով վարակուած հիւանդի թունալից արտաշնչութիւն եմ շընչում, ես ինձ զգում եմ աւելի... մեծ մարդ, քան այն ընկերին, երբ ընկերակից ուսուցչապետները շնորհաւորում են ինձ իմ նոր, մեծ գիւտի համար: Այդպիսի զգացումներ ունենալով՝ իմ նոր հերոսութիւնս ինձ համար ծանր չէ: Եւ դու, Լուիզա, պէտք է, որ ինձ ըմբռնես, հասկանաս: Դու այն անձնաւորութիւններից ես, որոնք գիտեն և ընդունակ են մեռնել յանուն գաղափարի: Երբ ես վտանգի մէջ էի, ես շատ լաւ յիշում եմ

քո հոգատարութիւնդ ինձ համար. դու այն ժամանակ կեանքդ էիր վտանգում մի մարդու համար, որին... դու չէիր սիրում:

ԼՈՒԻՉԱ. Ես...

ԱԼԲԵՐՏ. Ո՛ւշ, դու երբէք ինձ չես սիրել, պէտք չկայ տնուրջների յետեից ընկնել... Իսկ այսօր աւելի պարզ եմ տեսնում,—քո սիրտը երբէք չէ բարակել ինձ համար: Ներքի ինձ էլ թէ սխալում եմ: Ես աշխատում էի, հաւաստի վիճելով, որ համակրութիւն եմ վայելում... և այդ հաւատը պէտք է, որ բեռ յուզէր:

ԼՈՒԻՉԱ. Քո հաւաստիութիւնը: Ինչպէ՞ս պէտք է դանադանել նորան արհամարհանքից: Ես վիրաւորուած, անպատուած էի, ես զգածուած չէի, բայց յարգում էի բեռ... Իսկ այժմ...

ԱԼԲԵՐՏ. Իսկ այժմ:

ԼՈՒԻՉԱ. Այժմ զարհուրում եմ բեռնից, Ձեմ կարող մոռանալ այն աղբկանը:

ԱԼԲԵՐՏ. Դու շատ լաւ արեցիր, որ նորան առաջարկեցիր մեզ մօտ ապրել—ինձ համար էլ լաւ է այդ...

ԼՈՒԻՉԱ. Ինքս էլ չգիտեմ, ինչու առաջարկեցի... Նա... դու... այդ կողքէ կողք, մի յարկի տակ կենցաղը, օ՛... (ծածկում է դէմքը ձեռքերով):

ԱԼԲԵՐՏ. Խնդրեմ, չփոխես կարգադրութիւնդ: Դու զարհուրում ես զոհի և սպանողի մերձաւորութիւնից... Ամեն բան կարգի կձգենք... Բայց դու քո սրտի ձայնին լսիր... Քոյրդ ինձ նախազգուշացրեց, որ դու մեր յարաբերութիւնների խզումը չես կամենում, բայց մի վախենար... Ես այնպէս կանեմ, որ իմ ներկայութիւնը շատ ծանր չի թուայ բեռ... Այս րոպէից դու բոլորին ազատ կարող ես համարել բեռ:

ԼՈՒԻՉԱ. Տես, յամենայն դէպս ես քո թշնամին չեմ... Ես այդ ազատութիւնն ընդունում եմ այն պատճառով, որովհետեւ դա աւել ազնիւ ճանապարհ է: Ես այնպիսի տղամարդ չէի ընտրել ինձ համար իբրեւ ամուսին, որպիսին այսօր բեռ եմ տեսնում:

ՏԵՍԱՐԱՆ VII.

ԼՈՒԻՉԱ, ԱԼԲԵՐՏ ԵՒ ՄՕՐԻՍ.

ՄՕՐԻՍ. (Բարեկեցով): Բարե ձեզ: Այսպէս ուրեմն, ձեզ

հետեւում, հալածում են... բացարձակ կերպով։ Որքան անա-
խորժ բան է։ Չեր մտադրութիւնը չէ՛ք փոխել։

ԱԼԲԵՐՏ. Ամենեւին. (Հուլիզային)։ Խօսքը մի բանի թրղ-
թերի մասին է։

ԼՈՒԻՉԱ. Գիտեմ։

ԱԼԲԵՐՏ. Շատ մեծ տետրակ չէ, կարող էք գրպանի մէջ
թաղցնել. (Դուրս է գնում)։

ԼՈՒԻՉԱ. (Մօրիսին)։ Երէկ անբաւական մնացիք ինձնից։

ՄՕՐԻՍ. Այո՛։

ԼՈՒԻՉԱ. Իմ պատճառով մի՛ տանջուէք։

ՄՕՐԻՍ. Օ՛, այժմ տեսնում եմ թէ ձեր մէջ ինչ է կա-
տարւում։

ԼՈՒԻՉԱ. Ուրեմն աւելի լաւ, որովհետեւ կարիք չի լի-
նի խօսքերով արտայայտել։

ՄՕՐԻՍ. Օ՛, ոչ ասացէ՛ք...

ԼՈՒԻՉԱ. Բայց ոչ այսօր։

ԱԼԲԵՐՏ. Այս դիտողութիւններին և ցուցակների օրագի-
րքն է։ Տեսէք, պահանջէք ամենայն զգուշութեամբ։

(ՎԱՐԱԳՈՅՐ)

Բ. ԳՈՐԾՈՂ ՈՒԹԻՒՆ

Մօրիս Կօրմէի բնակարանում Մի մեծ սենեակ, որ ներկայացնում է պարապելու սենեակ, զրադարան և փորձերի լաբորատուարան (laboratoire)։ Սեղանների վրայ զանազան գործիքներ, պատերից կախ զանազան մարդակազմական պատկերներ։

ՏԵՍԱՐԱՆ. I

ԼՈՒԻՋԱՆ ԵՒ ԴԵՆԻՍ։

(Լուիզան համեստ, սեւ զգեստով, փոքրիկ քօղով, արագ զնոյմ եւ նստում է թագկաթողի վրայ պարապելու սեղանի մօտ. նրա յետեւից մտնում է Դենիսը)։

ԼՈՒԻՋԱՆ. Եթէ պ. Կօրմէն տանը չէ, ոչինչ, կսպասեմ։ Լսում էք։

ԴԵՆԻՍ. Լաւ, լաւ Բայց կարգ չէ, որ տիկիններն այստեղ սպասէին... Այստեղ պարապելու սենեակ է, այստեղ ամեն մարդ իրաւունք չունի իւր քէֆն ուզածի պէս մտնել։ Արդեօք բարի չէ՞ր լինի, որ հետեւէր ինձ՝ ընդունարանը։

ԼՈՒԻՋԱՆ. Չգիտեմ ո՞ւմ տեղ էք դնում ինձ։ Ես ձեզ հաստատ խօսք եմ տալիս, որ պարոնդ չի բարկանայ վրադ, որ ես այստեղ եմ։

ԴԵՆԻՍ. Հաա պարզ է, նա զիտէ արդէն, որ եթէ ձեզ թողել եմ այստեղ մտնելու, կնշանակէ այլկերպ հնար չկար, նախքան այստեղ մտնելու տասն և հինգ տարի ծառայել եմ Սալպեարիերում։ Բոլոր փորձերի ժամանակ ներկայ եմ լինում։ Ուրեմն, պարզ է, որ ջղային տիկինների հետ վարուելու եղանակը գիտեմ։ Ուստի, եկէք, ծերուկիս ականջ դրէք, ինչպէս իմ պարոնին կլսէիք։ Ախր ես արդէն զիտէի, որ զուրկ պիտի զայիք։

ԼՈՒԻՋԱՆ. Գիտէի՛ք։

ԴԵՆԻՍ. Ինչպէս չէ. պարոնը ձեր ամբողջ կեանքի պատ-

մութիւնն է արեւ ինձ:

ԼՈՒԻԶԱ. Այ՛ թէ ինչ:

ԴԵՆԻՍ. Չեր անունն է Գորտենդիա. ծնունել էք Շիվրեօ-
դուս... մօտ երկու տարի է ահա, որ պսաճար էք: Յաճախ
չէք տանջուում, բայց հէնց որ բռնեց, էլ Տէրը փրկէ, թէ մ'եց
էք գոռում-գոչում, կուչ-կծիկ զալիս... Դուք թէեւ գրագէտ էք,
բայց չի կարելի ասել, որ շատ էլ զիտուններից էք... Է՛, իսկ
հիւանդութիւնը բռնած ժամանակ դուք նոյն իսկ լատիններէն
էլ էք խօսում... Այո, տիրո՛ւհի: Ախ, քիչ էր մնացել մոռա-
նայի: Չեր աջ աչքը ծուռ է:

ԼՈՒԻԶԱ. Ե՛ս... իմ աչքս—ծո՛ւռ:

ԴԵՆԻՍ. Այո՛, բնական դրութեամբ, եղած ժակնակներդ:
Իսկ հիւանդութեան ժամանակ, երկուսով էլ տեսնում էք:

ԼՈՒԻԶԱ. Սխալուում էք: Երկու աչքով էլ հիանալի տես-
նում եմ:

ԴԵՆԻՍ. Տարօրինակ բան... իսկ նա ինձ ասաց, որ աջը...

ԼՈՒԻԶԱ. Իսկ մի՛թէ կոյրը կարող է տեսնել յանկարծ:

ԴԵՆԻՍ. Մենակ այդպիսի բաներ է լինում: Այ, օրինակ
Լէօնին (Պատից վերցնում է նկարների ժողովածուից մի
շրջանակ): Կայր է, պոչ խեղճ աղջիկն, ինչպէս տեսնում էք:

ԼՈՒԻԶԱ. Այսպիսի հրաշալի աչքեր՝ և կո՛յր:

ԴԵՆԻՍ. Այո՛ դա կոչուում է ջղային կուրութիւն: Նորա
ձեռքից բռնած են ման ածում: Է՛, բաւական է հէնց պարոնս-
քնէածութեան ենթարկէ նորան, որ իսկոյն տեսնէ: Բժիշկը
կպատուիրի նորան տուն գնալ և նա կերթայ և նոյն իսկ ոչ
որից ծանապարհն էլ չի հարցնի:

ԼՈՒԻԶԱ. Բայց ի՞նչպէս է քնէածութեան ենթարկում:

ԴԵՆԻՍ. Է՛, ի՞նչ էք ձեռք առել ինձ. կարծէք, ոչնչից
տեղեկութիւն չունի: Ո՛վ զիդէ բանի անգամ հէնց ձեզ են քը-
նացրել:

ԼՈՒԻԶԱ. Եւ ո՛չ մի անգամ:

ԴԵՆԻՍ. Է՛, կնշանակէ, այսօր կքնեցնեն. առաջին պայ-
մանն է, հէնց որ տեսնում ենք, որ կենը մի նորանշան երե-
ւոյթ է ներկայացնում, կնշանակէ հետաքրքրական «դէպք» է,
իսկոյն և եթ ընեցնում ենք և տեսնում, թէ ինչեր կանէ քը-
նած ժամանակ:

ԼՈՒԻԶԱ. Է՛, յետո՛յ:

ԴԵՆԻՍ. Հատ զուարճալի բան է. կատարեալ կատակեր-
կուծիւն: Մէկին զնդասեղներով են ծակծկում. իսկ նա չի էլ
զգում: Մի ուրիշը, որի թեւը, կարծէք, ընդունում են կաթուած-
հար է եղած, քնած ժամանակ այդ թեւն այնպէս է պտտում,
որ առողջ թեւիցն էլ լաւ. Իսկ այժմ սա, օրինակ (ցոյց է տա-
լիս լուսանկարը), Վալերիան, երեսուն տարեկան է: Այս քա-
նի օրս նրան ներշնչեցին, թէ ինքը տասը տարեկան փոքրիկ
աղջիկ է. իսկ յետոյ մենք թագնուեցանք հարեան սենեակում
և երեք ժամ շարունակ դիտում էինք: Եւ ոսոստում և ծիծա-
ղում էր և հէնց մի փոքր կծեծէինք դուռն այսպէս, նա իս-
կոյն սեղանի տակն էր մտնում՝ թագ կենում: Յետոյ սկսեց
իւր մօրը դուրգուրալ և փաղաքշել... իսկ խեղճի մայրը վա-
ղուց է մտել... մինչև անգամ մարդ փշաքաղում է:

ԼՈՒԻՉԱ. Անշուշտ:

ԴԵՆԻՍ. Պարոնի մօտ յաճախ պարապելու է գալիս պր.
Ալբերտ Դօննան, հիւանդանոցից, որին Վալերիան ճանաչում
է: Բայց և այնպէս, երբ պ. Դօննան մօտեցաւ նորան, նա նո-
րան այն երաժշտի տեղ դրեց, որ գալիս էր իւր մայրիկի մօտ:
Խնդրեց, որ իւր քիթը սրբէ, ինչպէս փոքրիկ երեխային: Այ,
մի ուրիշը՝ Բերթան. սարսափելի ատում է ինձ. քնեածութեան
ենթարկելուց առաջ քիչ մնաց ապտակ պիտի զարկէր ինձ,
իսկ քնած ժամանակն այնպէս սիրեց ինձ, որ նոյն իսկ իւր
մօտ հրաւիրեց...

ԼՈՒԻՉԱ. Անուշ աղջիկ...

ԴԵՆԻՍ. Սպասեցէք, է՛, այժմ դուք ի՞նչ կպատմէք ինձ:

ԼՈՒԻՉԱ. (ցոյց տալով լուսանկարները): Եւ այս բո-
լոր արարածները—հիւանդ, ախտաւորներ են, որոնց ըստ գան-
կութեան ստիպում են կամ լալ, կամ ծիծաղել...

ԴԵՆԻՍ. Այո՛, սոքա ամենքն էլ—«դէպքեր» են, ինչպէս
և դուք... Հա՛... իմացայ այժմ, թէ ինչպէս էք այստեղ եկել:
Պարօնը ձեզ քնեածութեան է ենթարկել ձեր տանը և հրա-
մայել է, որ գաք այստեղ... Դուք, իհարկէ, ոչինչ տեղե-
կութիւն չունիք, ոչինչ չէք յիշում: Ձերն էք պնդում, ինձ չէք
լսում, երբ ասում եմ դուքս գնացէք պարապելու սենեակից,—
այս բոլորը ներշնչման արդիւնք է... Ես էլ ասում եմ, ինչպէ՛ս
համեստ, ինչպէս բարեկիրթ, բայց միևնոյն ժամանակ ականջ
չի դնում ինձ...

ՏԵՍԱՐԱՆ II.

ԼՈՒԻԶԱ, ԴԵՆԻՍ ԵՒ ՄՕՐԻՍ.

ՄՕՐԻՍ. (Տեսնելով Լուիզային) Դո՛ւք... Այստե՛ղ,
ԴԵՆԻՍ. (Կամացուկ Մօրիսին). Նա այնպէս բարկա-
ցաւ, որ ես վախենում էի նորան դուրս անելուց:

ՄՕՐԻՍ. Ա՛յդ էր պակաս:

ԴԵՆԻՍ. Սաստիկ ջղային է:

ՄՕՐԻՍ. Լաւ, լաւ:

ԴԵՆԻՍ. Ասենք, այնքան էլ չթունդներից չէ՛, Հասարակ
ջղային յուշումներից է՛ (Դուրս է գնում):

ՏԵՍԱՐԱՆ III.

ԼՈՒԻԶԱ ԵՒ ՄՕՐԻՍ.

ՄՕՐԻՍ. Դո՛ւք... դուք ի՞նչ մօտ Մ՛, որչափ երջանիկ
եմ (Կամենում է համբուրել նորա ձեռքը, որ կամացուկ
ազատում է):

ԼՈՒԻԶԱ. Ա՛խ, ոչ, թողէք... Եթէ ես ձեզ մօտ եմ, միայն
եսական շարժառիթներից դրդուած և հետո ձեզ համար եր-
ջանկութիւն չեմ բերել. Եւ ի՞նչ երջանկութիւն կարող եմ
պարգևել ես. Չէ՛ որ հոգիս ցաւ ու վրդովմունքի ծով
է միայն:

ՄՕՐԻՍ. Այո՛, վրդովուելու շատ բան կայ... Այդ դատա-
պարտութիւնը բաւական աղմուկ է հանել: Բայց ապացոյցներն
այստեղ են (ցոյց տալով գրասենդանը) և նոքա չեն կարող
ձեռք բերել: Սակայն հասարակական կարծիքն արդէն որոշ ուղ-
ղութիւն է ստացել: Որչափ դժգոյն էք այսօր:

ԼՈՒԻԶԱ. Ամբողջ դիշերն անքուն եմ անցրել Ամուսինս
գիտենալով, որ իրեն չեմ սիրում, վեհանձնօրէն ազատութիւնս
յետ է շնորհել ինձ: Բայց և չեմ կարող երեսի վերայ ձգել
նորան այն բոպէին, երբ ամենքը երես են թերում նորանից:
Նորա հետ անցրած օրերս աննախանձելի են եղել. ես երի-
տասարդ եմ, ես ծարաւ եմ լաղդաւորութեան... Մինչև այս
բոպէս մտքովս մի բոպէ անգամ չէ անցել թողնել, հեռանալ
ամուսնուցս: Ես յարգո՛ւմ էի նորան: Չնայելով, որ ինքս ինձ
վիրաւորած էի համարում, սակայն և այնպէս յարգանք ու
հիացում էի տածում դէպի նա: Չգտում էի ինքս էլ հասնել

այն պատուանդանին, որի վերայ կանգնած էի տեսնում նորան... Եւ յանկարծ, ամեն ինչ խորտակւում է. նա դուրսւած է... Ինչ անեմ. Ես չընդունեցի, բայց և չմերժեցի ինձ շնորհած ազատութիւնը: Իսկ յետո՛յ .. Ես հաւատում եմ ձեզ, հաւատում եմ ձեր խելքին, ձեր հոգուն և ոչինչ չեմ ծածկում... Ես զարհուրում եմ, երկիւղ եմ կրում մի տեղ երեւալուց: Արեւորը արիաբար կրում է բոլորը,— առաւօտեան հիւանդանոց գնաց, ցերեկը ձեմարանում էր, ամենայն հաւանականութեամբ: Կոյսերի մայրապետի մօտ էի գնացել մի որբ աղջկայ համար, որին կամեսնում եմ մօտս առնել... Կարծում էի, թէ վանքում հին, մանկական յիշատակները նորից կարծարծուին մէջս: Բայց ամեն ինչ սառն ու մռայլ էր: Ինքս ինձ սարսափելի միայնակ եմ զգում:

ՄՕՐԻՍ. Ահա այդ պատճառով և եկել էք ձեր... բարեկամի մօտ: Սիրո՞ւմ էք ինձ:

ԼՈՒԻՋԱ. Կարող էի ձեր առաջ բանալ հոգիս, եթէ... Բայց այդ մասին չէ խօսքս: Ես ձգում, հեռանում եմ սեփական անիցս— օջախիցս, որտեղ ամեն ինչ ինձ սաբսափ է ներշնչում, բայց չնայելով այդ բոլորին, դարձեալ այնտեղ կկամենայի երջանկութիւն ու բարօրութիւն գտնել: Ես գիտնականի՝ և ոչ թէ բարեկամի մօտ եմ եկել: Դիմում եմ ձեր գիտութեանը, ձեր հոգեբանական գիտողութիւններին: Մարդկային հոգին բաց է ձեր առաջ: Բժիշկ եղէք և իմ հոգու համար, կատարեալ անկողնականութեամբ: Շատ, շատ բան եմ պահանջում, բայց ոչ գիտութիւնից, այլ ձեր ազնւութիւնից:

ՄՕՐԻՍ. Բանն էլ այն է, որ գիտութիւնից շատ ու շատ բան էք պահանջում:

ԼՈՒԻՋԱ. Որչափ համե՛ստ էք: Մի՛թէ այնպիսի մի հասարակ դէպք, ինչպիսին իմս է, ձեզ զինաթափ է անում, ձեզ անգոր էք զգում նորա առաջ: Ամուսինս ինձ սարսափ է ազդում: Կարո՞ղ եմ արդեօք յաղթել այդ սարսափը և պարտաւոր եմ արդեօք: Կգտնե՞մ արդեօք մէջս այնքան յոյժ, որ զո՞հ բերեմ ինձ: Եւ եթէ յոյժ չունենամ, բայց պարտաւորութիւնս ինձ թելադրէ, որ մինչև կեանքիս վերջը պարտաւոր եմ կապուած մնալ, ապա ո՞րտեղ է այն ելքը... Յոյց տուէք, տուէք ինձ այդ միջոցները: Զօրացրէ՛ք, ամրացրէ՛ք իմ թոյլ յոյժերս:

ՄՕՐԻՍ. Տարօրինակ պահանջ է:

ԼՈՒԻՉԱ. Ցարօրինակ: Ինչո՞վ:

ՄՕՐԻՍ. Դուք իմ գիտութիւնից շատ աւելի մեծ պահանջներ էք անույժ, բան կարող է տալ: Ես բոլորովին ընկճուած եմ այն պահանջների առաջ, որ դուք կամենում էք ստանալ: գիտութիւնից:

ԼՈՒԻՉԱ. Ինչ է ձեր գիտութեան եռութիւնը: Արդեօ՞ք մարդկային հոգին ուսումնասիրելը չէ՞:

ՄՕՐԻՍ. Հոգու... այո... կամ աւելի ճիշդ մարդկային այն կրքերն ու բերումները (affection), որոնց կողմէն ենք հոգեկան տարօրինակ երեւոյթներ:

ԼՈՒԻՉԱ. Չե՞ղ՝ այդ ասպարիզում մեծ, նորամոյժ ոյժ են համարում:

ՄՕՐԻՍ. Կարծում եմ, որ մի փոքր բան էլ ես եմ արել գիւտերի այդ աշխարհում:

ԼՈՒԻՉԱ. Այսինքն՝ ի՞նչպիսի...

ՄՕՐԻՍ. Ինչպիսի՞: Ամեն տեսակի: Ոչինչ յայտնագործած չէ՝ ամեն ինչ ծածկուած ու գաղտնիք է հոգեբանութեան մէջ: Հագարաւոր տարի է, որ բարի մարդկանց բթից բռնած ման են ածում դադարկ բռնելով: Իսկ հետեւանքը.— այն, որ մենք տեղեկութիւն ունենք Հրատի մթնոլորտի կազմութեան մասին, բայց ոչինչ չգիտենք այն մասին, թէ ի՞նչն է հարկադրում մեղ շնչել, մտածել, շարժուել: Մի՞թէ խայտառակութիւն չէ՞ սա: Եւ ահա այդ խաւարից պէտք է ելնել: Մենք, որ վճռել ենք աշխատել գիտութիւն ստեղծելու, փորձերի, գիտողութիւնների միջոցով մարդկային բանականութիւնն ուսումնասիրելու, առանց որի գիտութիւն լինել չէ կարող,— այդպիսիներս շա՞տ, շատ բիչ ենք: Մենք հնարում ենք բազմաթիւ մեքենաներ, գործիքներ, օրինակ այս գլանը (մօտենում է գործիքին եւ ցոյց է տալիս: Գործիքը նման է ծանրաչափի, որի գլանը ծածկուած է սեւ թղթով, ներքեւ անցնում է կառուցուկէ խողովակ, որի ծայրին կայ նոյնպիսի տանձիկ): Գլանը ստուարաթղթից է, ծածկուած է մուրափ: Այստեղ մի փոքրիկ ծակ կայ, որի մէջ մի փոքրիկ սլաք, որ կպչում է գլանին. նա միացած է խողովակի հետ, որը ես դնում եմ, օրինակ ձեր ձեռքում այնպէս, որ գարկերակի իւրաքանչիւր զարկը շարժում է և սլաքը, որ ամեն անգամ նոր հետք է թողնում գլանի վրայ. իսկ գլանը պտտւում է ժամացոյցի մեքենայի շնորհիւ: Հետեւաբար գլանի վրայ ստացւում է ծուռ և

բեկ գծեր, որոնք շատ գեղեցիկ կերպով ապացուցանում են ինձ ձեր շարկերակի փոփոխութիւնները: Տեսէք, ես ծափ կը տամ: Եւ չնայելով, որ ես ձեզ նախազգուշացրի, բայց և այնպէս ծուռ ու մուռ գծերն աւելի յաճախի գծուեցան, այսինքն, ապացոյց այն բանի, որ դուք յուզուեցաք, թէ և չէք կարող հաշիւ տալ թէ՛ ինչո՞ւ: Ես կկարգամ այս գիրքը. հետաքրքրական տեղերում մենք գլանի վրայ կստանանք թեք գծեր՝ աւելի մեծ անկիւնագծերով, իսկ անհետաքրքրական և ձանձրալի տեղերում հաշիւ նշմարող անկիւնագծեր: Գիտէ՞ք ինչ օգտակար գիւտեր կարելի է անել, եթէ այս եղանակով դիտողութիւններ անենք մեր իւրաքանչիւր հոգեկան արտայայտութիւնների, իւրաքանչիւր զգացման վրայ: Հաղարաւոր փորձեր ենք անում հաղարաւոր տարբեր-տարբեր անհատների վերայ՝ դպրոցներում, դործարաններում, զօրանոցներում: Եւ իւրաքանչիւր փորձի համար արձանագրութիւն է պահոււմ, կամ իբրեւ մրտած ստուարութիւն վրայ գծածուած սպիտակ հետքեր կամ իբրեւ յուշագրեր և կամ թուեր: Այդ բոլորը ժողովում, դասաւորում ենք և կազմում գիտնական անհատներ գիւտն:

ԼՈՒԻՋԱ. Յետո՞յ. հետևանքը:

ՄՕՐԻՍ. Ինչնից յետոյ ուրիշ գիտնականներ կը շարունակեն նոյն գործը, սկսելով այն տեղից, ուր կանգ էի առել ես և այդպէս շարունակ, անդադար, մինչև որ ժողոված նիւթերից ճշմարտութիւնը կցուլայ. այն ժամանակ միայն հոգեբանութեան գիտութիւնը ստեղծուած կլինի և այն ժամանակ միայն կարելի է ասել՝ թէ հոգի ասուած բանը գոյութիւն ունի՞ թէ ոչ, անմահ է, ո՞րտեղից է սկիզբն առնում և ո՞ւր է զընդունում: Այն ժամանակ գրական նախադրեալներ կունենանք հոգեկան մեքենակազմը սահմանելու համար: Եւ այն մեքենավարները, որոնք հոգեբան կկոչուին, անսխալ, անվրէպ ձեռքով կարող կլինեն նորոգել փչացած մեքենան:

ԼՈՒԻՋԱ. Բայց ե՞րբ կլինի այդ:

ՄՕՐԻՍ. Մի հինգ հարիւր տարուց յետոյ: Շատ ժամանակ չէ այդ գիտութիւն ստեղծելու համար:

ԼՈՒԻՋԱ. Հի՞նգ հարիւր տարուց յետոյ միայն ես հնարաւորութիւն կունենամ իմանալու, թէ հոգի ունի՞մ արդեօք և թէ ինչպէս պիտի բժշկել նորան: Եւ այդ այն բոլորէն, երբ հոգիս տանջոււմ է և ես հնարք չեմ գտնում իմ յուսահատ

վիճակիցս ելնելու... դուք ձեր բոլոր գիտութեամբ հանդերձ՝ շատ վատ մեխիթարական միջոց էք հնարել... Ախր, հասարակ, խեղճ գիւղական քահանան իմ վիշտս ու ցաւս ամոքելու միջոցը զիտէ արդէն.— իւր պարզ ու անպաճոյճ խօսքերով, քարոզով՝ ՄՕՐԻՍ. Բայց ի՞նչ էիք ասում քիչ առաջ ձեր մենաստանի մասին, որից նոր էք գալիս։ Սառք... մոպշ...

ԼՈՒԻԶԱ. Բայց իմ խօսքս մենաստանի քարէ պատերի մասին չէ։ Գիւղական ծերուկ քահանան, որ զօրեղ է իւր ուժեղ հաւատով, ինձ ղյժ, կորով ու աշխոյժ կներշնչէ։

ՄՕՐԻՍ. Խղճուկ գիտութիւն... ինչպէս յարձակում էք դուք նորա վրայ, ենթադրենք, թէ մի քիչ էլ մեղաւոր է նա... բայց դուք էլ... պահանջում էք նորանից այն, ինչ որ տալ չէ կարող։ Նա բուժում է մարմնական ցաւերը, բայց բարոյական տանջանքների առաջ անզօր է։ Թէեւ... ոչ բոլորովին... Այստեղ էլ նա օգնութեան է հասնում... Բանի՛ր-բանի կանայք, որոնք տանջւում էին հոգեպէս, թողել հեռացել են այս սենեակը համարեա առողջացած։

ԼՈՒԻԶԱ. Ուրեմն ինչո՞ւ անպատճառ նորա և ո՛չ ես։

ՄՕՐԻՍ. Որովհետեւ դուք մարմնով առողջ էք. իսկ իմ հիւանդների հոգեկան խանգարմանը հետևում էք և մարմնական հիւանդութիւն։

ԼՈՒԻԶԱ. Օրինակ անդամալոյծ ձեռք կամ ջղային կուրո՞ւթիւն։

ՄՕՐԻՍ. Օ՛, դուք բաւական տեղեկութիւն ունիք։

ԼՈՒԻԶԱ. Հնորհիւ ձեր ծառայի պատմութիւններին, որը ընդունել էր ինձ... գիտէք ո՞ւմ փոխարէն։ Այն կնոջ տեղը դնելով, որ այսահար է և որին այսօր սպասում էք։ Անշանակէ, եթէ ե՛ս լինէի այդ դժբաղդ կնոջ տեղ, դուք ինձ առողջացնելու խնդիրը ամբողջ հինգ դար չէիք յետաձգել...

ՄՕՐԻՍ. Եւ յիրաւի, կարծում եմ, որ կարող կլինեմ բժշկել նորան...

ԼՈՒԻԶԱ. Ի՞նչպէս։

ՄՕՐԻՍ. Ես նորան կհիպնոզացնեմ և կներշնչեմ, թէ դուք թողել, հեռացել է նորանից։ Միանգամից, իհարկէ, չի յաջողի, բայց 15-րդ, 20-րդ փորձին կյաջողի...

ԼՈՒԻԶԱ. Այնպէս որ, եթէ ես էլ հիւանդ լինէի, դուք ինձ կը քնադնէիք և...

ՄՕՐԻՍ. (Ժպտալով). Եւ յիրաւի, ինչո՞ւ չփորձել...

ԼՈՒԻԶԱ. Կամենուս էք ինձ քնացնե՛ր:

ՄՕՐԻՍ. Ձարժէ նեղութիւն կրել, արդէն արուած է:

ԼՈՒԻԶԱ. Քնած եմ: Ե՛ս:

ՄՕՐԻՍ. Ոչ, ոչ: Հանաք եմ անում: Դուք զառանցում էք:

ԼՈՒԻԶԱ. Աւելի շուտ դուք էք զառանցում:

ՄՕՐԻՍ. Ներեցէք, ես միշտ պատրաստ ունիմ փոքրիկ տեսութիւններ զանազան անակնունելի դէպքերի բազատութեան համար: Ձեր այցելութիւնը ես բազատում եմ, իբր ներշնչման հետեանք:

ԼՈՒԻԶԱ. (հեզնօրէն). Մի բիչ առաջ ծառան էլ նոյն էր նա խազուշակում, երբ ես պատեղ եկայ:

ՄՕՐԻՍ. Հանգիստ թողէք այդ ծերուկ չաչանակին: Այո՛, դուք պատեղ զանում էք այս բոպէիս ներշնչման շնորհիւ: Երէկ երբ ձեզ մօտ էի, դուք պատկերացաք իմ առաջ, ինձ հետ միասին, այս սենեակում, այնպէս, ինչպէս այժմ: Հայեացքիս մէջ անդրադարձաւ այդ իմ ներքին զօրեղ, կրքոտ զգացումս և ես ներշնչեցի: Զի կարող աւելի զօրեղ ներշնչում լինել, բան այն, երբ երկու բուռն ցանկութիւն զուգադիպութեամբ նոյնն են ցանկանում: Եւ այժմ... ինձ համար շատ պարզ է,—դուք սիրում էք ինձ:

ԼՈՒԻԶԱ. Ահա գիտնականի եղբակացութիւն, որի համար, կարծես, միայն ապացոյցներ են պակաս:

ՄՕՐԻՍ. Ինձ չափազանց ինքնավստահ էք համարում: Օ՛, ոչ, ես գիտեմ, որ երկու օր առաջ դուք դէպի ինձ ամենասովորական համակրութիւն էիք տածում, բայց այսօր ինքն իրեն ինձ մօտ է գալիս մի օգնական, ու համակրութիւնը սիրոյ կվերածէ:

ԼՈՒԻԶԱ. Ի՞նչ օգնական է դա:

ՄՕՐԻՍ. Վի՛շաբ, Ինչպէս հոգեկան, նոյնպէս և կենդանական կեանքում, հիւանդութեան ենթակայ է արդէն թուլացած մարմնակազմը: Եւ սէրն այդպիսի անտաքանական դէպքի ամենաբնորոշ տիպն է: Ցեսէք, ժողովուրդը շատ անգամ սէրն ու խելագարութիւնը նոյնացնում է: Եւ յիշաւի, մարդուն յանկարծակի բերող վիշտը, նայելով հանգամանքներին, կամ սիրոյ և կամ խելագարութեան է տանում:

ԼՈՒԻԶԱ. Այնպէս որ բաղդաւոր մարդիկ անընդունակ են սիրելու:

ՄՕՐԻՍ. Մի՛թէ այդպիսի բան ասացի: Բայց նոքա զրոս-

պում են իրենց, թէ և կիրբը նոցա տակն ու վրայ է անում:

ԼՈՒԻԶԱ. (Հնգնօրէն). Որի պատճառով և շնորհաւորում եմ ձեզ. այն ինչ ինձ մնում է, որպէս խելագարի, օգտուել իմ բուռն սիրով:

ՄՕՐԻՍ. Մի բարկանաք: Ես միայն իմ տեսութիւնն էի պարզում: Դուք տանջւում էք և ցաւից ծնւում է սէր, ճիշդ այնպէս, ինչպէս խոնաւ, բորբոսնած ծաճից ծնւում է հրաշալի ծաղիկ: Սէրը բռնկել է ձեր մեջ, դուք այլ ևս ձեր տէրը չէք և առանց կեղծ ամօթ զգալու վազում եք այստեղ, ինքներդ էլ անկարող լինելով այդ մասին հաշիւ տալ:

ԼՈՒԻԶԱ. (Հնգնօրէն) Այո՛, այո՛, իհարկէ: Գիտե՛ք, ինչ կասկած ծագեց սրտումս: Երկու օր առաջ երբ դուք աշխատում էիք հրապուրել ինձ ձեր պերճախօսութեամբ, ձեզ քաջ յայտնի էր մեզ սպառնացող վտանգը... Ո՛հ, Մի հերքէք: Ամուսինն նոյն օրն եղել էր ձեզ մօտ և խնդրել, որ դաք թըղթերը վերցնէք: Ախ, ինչպէս առաջ չէի մտածել: Ահա՛, քանի՛ տարի է ախր, որ դուք հետևում էք ինձ: Եւ ձեր թղթերի մէջ, անշուշտ, մի տեղ, մի կտոր թղթի վրայ իմ մասին նկատողութիւն կունենաք արած, որի մէջ նշանակած կլինէք իմ նախապատրաստութեան զանազան աստիճանների մասին... և միայն սպասում էիք յարմար ժամ ու ժամանակի, երբ թախիժըն ու անբուն գիշերները կհասցնեն ինձ ձեզ համար ցանկալի հետևանքին: Ալբերտից ստացած տեղեկութեան հիման վերայ նախազգուշացած, այն օրուայ նախօրէքին, երբ ձեր հաշուով, իմ մէջ լռուր կրքերս պիտի բռնկուէին, դուք գալիս էք ինձ մօտ, զինուած ձեր ներշնչմամբ, ամենևին աչքի առաջ չունենալով իմ ջղային դրութիւնս... իմ ցաւս ու վիշտս նոյն իսկ պէտք է նպաստէին ձեր նպատակն իրագործելու համար: Հրաշալի՛ է: Սէրը, ձեր հաշուով, խելագարի սովորական զառանցանք է, ուրեմն պէտք է օգտուել այդ խելագարութեան ընդհանր: Գիտե՛ք ինչ. գուցէ ամուսնուս ոճիրն աւելի զարհուրելի է քան ձեր արարքը, սակայն...

ՏԵՕԱՐԱՆ IV.

ԼՈՒԻԶԱ, ՄՕՐԻՍ ԵՒ ԴԵՆԻՍ.

ԴԵՆԻՍ. Պ. Դոննան է եկել: Կարո՞ղ է ներս գալ:

ՄՕՐԻՍ. Ոչ, ոչ, ես ինքս կգամ... Այսահար հիւանդը դեռ
ևս չէ՞ եկել:

ԴԵՆԻՍ. (Նայելով Լուիզային). Խնչպէս չէ...

ԼՈՒԻԶԱ. Ոչ, բարեկամ, քո ասածը տանձն է:

ՄՕՐԻՍ. Խնդրեցէք բժշկին մի բոպէ սպասէ:

ԴԵՆԻՍ. Շատ բարի:

ՄՕՐԻՍ. Ձեր ամուսինն էլ է գալիս ինձ մօտ այդ հիւան-
դի վրայ դիտողութիւն անելու:

ԼՈՒԻԶԱ. Դուք կարծում էք թէ ես վախենում եմ ա-
մուսնուս հանդիպելուց: Ես ազնւո եմ պիտի: Բայց ոչ, ես կիւան-
գարեմ նորան ազատ խօսելու:

ՄՕՐԻՍ. Իմ և նորա մէջ գաղտնի ոչինչ չկայ:

ԼՈՒԻԶԱ. Նա ինչոր գաղտնիք ունի, մի բան թաղցնում
է... Չափազանց հանգիստ է... Երեւի մի բան է մտադիր
անելու...

ՄՕՐԻՍ. Անհանգիստ մի՛ լինիք: Նորան լաւ եմ ճանա-
չում, Այնպիսիներից չէ, որոնք իզուր արիւն պղտորեն մի քա-
նի անմիտների բարձրացրած գոռում-գոչումից:

ԼՈՒԻԶԱ. Բայց նա չի կարող և իրեն ներել կատարած
սխալը...

ՄՕՐԻՍ. Ի՞նչ սխալ:

ԼՈՒԻԶԱ. Դա արդէն նորա գաղտնիքն է: Այստե՛ղ կըն-
դունէք նորան:

ՄՕՐԻՍ. Այո, ինչպէս սովորաբար:

ԼՈՒԻԶԱ. Ես կկամենայի լսել թէ ի՞նչ է ասում նա:
Ցոյց տաւէք թէ որտեղից էք դիտում աստը տարեկան երեխայ
գարձրած տիկիններին:

ՄՕՐԻՍ. (Յոյց տալով դուռը). Իմ սենեակից: Վարա-
գոյրի յետեից ծակ է թողնուած դիտելու համար:

ԼՈՒԻԶԱ. Ես պիտի թաղցնուեմ...

ՄՕՐԻՍ. Մի՛թէ հանաք չէք անում: Լո՛ւրջ:

ԼՈՒԻԶԱ. Նոյն իսկ չափազանց լուրջ: Տեսնում եմ, որ
մարդ ճանաչելը դժուար է: Պէտք է ծածուկ լսել նորան: (Դը-
նում է միւս սենեակը):

ՄՕՐԻՍ. (Յետեւից). Երբ կերթայ, յոյս ունիմ, որ բաւա-
կան... կակզած կլինիք: (Դիմում է դէպի մուտքի դուռը եւ
ներս է հրաւիրում Ալբերտին):

